Մարտի 29, 30 Իկենոբո Սոկատոկուի պրոֆեսոր տկն. Միդորի Յամադան անցկացրել է ճապոնական ավանդական մշակույթը ներկայացնող միջոցառում

Մարտի 29-ին (Ուրբ) և 30-ին (Շաբ) Հայաստանում Ճապոնիայի դեսպանությունը կազմակերպել է թեյախմության և սումիէի (ճապոնական թանաքով գեղանկարչություն) ցուցադրություն և վարպետության դաս, որն անցկացրեցին տկն. Միդորի Յամադան՝ Իկենոբո սոկատոկու պրոֆեսոր, սումիէի և թեյախմության վարպետ, և դասախոս տկն. Գալինա Դավիդենկոն:

«Հիկարի» հայ-ճապոնական կրթական և մշակութային կենտրոնի հետ համատեղ թեյախմության արարողություն, սումիէի և իկեբանայի ցուցադրություն և վարպետության դաս անցկացվեցին Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում և «Երևան, իմ սեր» հիմնադրամում, իսկ Էջմիածնի Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում տեղի ունեցավ սումիէի ցուցադրություն և վարպետության դաս:

Մարտի 30-ի միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ նախագահի կինը՝ տիկին Նունե Սարգսյանը: Երկու օրվա ընթացքում շատ մարդիկ մասնակցեցին, և այս միջոցառումը մեծ հնարավորություն տվեց մասնակիցներին խորացնել հետաքրքրությունը ճապոնական մշակույթի հանդեպ:

Սումիէի և իկեբանայի ցուցադրություն և վարպետության դաս Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում

Սումիէի ցուցադրություն և վարպետության դաս Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում

Թեյախմության բացման արարողություն և Սումիէի ցուցադրություն «Երևան, իմ սեր» հիմնադրամում

Սումիէի ցուցադրություն և վարպետության դաս «Երևան, իմ սեր» հիմնադրամում

Թեյախմության արարողության ցուցադրություն և վարպետության դաս «Երևան, իմ սեր» հիմնադրամում